№ 199 ՈՒՐԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 199

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատողին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատողին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ծերերին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարումինեան
Ն. Ն. Վեսելովզօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(չ.ու.կ.) առ 970. 100—85

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՆԵՒՄՕՏՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌՕՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29
առ. (ա. օ.) 504. 100—34

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաքեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային Ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(ե.հ.կ.) առ. 634. 100—1

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփօրից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—35

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Յօգուտ «Մշակի» ֆօնդի
հետեւեալ գրքերը.
1) «ՄՇԱԿԸ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Աւ. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յօբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 2. 0—8

ԱՅԼ ԵՒՍ ՀԱՅ ՉԸ ՄՆԱՑ

Պետրօգրադի Հեռագրական Գործակալութիւնը գուժում է.

«Սըվազի (Սեբաստիայի), Երզրումի և Տրապիզօնի վիլայէթներում բոլոր հայերը ջարդված են։ Ջրերը լի են դիակներով. սոսկալի գազանութիւններ են գործվում»։

Սրանք այն վիլայէթներն են, որոնց հայ ազգաբնակութեան վիճակի մասին մենք տեղեկութիւն չունէինք. այժմ ստացանք այդ տեղեկութիւնը. պարզվեց, որ այդ երեք վիլայէթներում էլ հայութիւնը ամբողջովին ջնջված է։

Եւ որովհետև Վանի, Բիթլիսի վիլայէթներում էլ հայութիւնը ամբողջովին ջնջված է, ուստի Թիւրքաց Հայաստանը կազմող 7 վիլայէթներից 5-ի ամբողջ հայութիւնը ջնջված է։ Մնում են 2 վիլայէթներ՝ Խարբերդի և Դիարբէքիրի, որոնց հայ ժողովրդի վիճակի մասին դեռ տեղեկութիւն չունենք։ Բայց ոչ մի կասկած չէ կարող լինել, որ այդ երկու վիլայէթներում էլ, որոնք սահմանակից են Միջագետքին, հայութիւնը կամ ջնջված է կամ քշված, փարված Միջագետք.

Եւ այսպէս, Թիւրքաց կառավարութիւնը կամ երիտասարդ Թիւրքերի կառավարութիւնը իրագործեց փառաւորապէս այն ծրագիրը, որ երկնել և մշակել էր սուլթան Աբդուլ-Համիդը, այն է ջնջել ամբողջ հայ ազգը Թիւրքիայում և Հայաստանը թափուր դարձնել հայերից։

Հայաստանը առանց հայերի....։

Կատարվեց և այդ իրողութիւնը։

Եւ ոչ ոք չը կարողացաւ ետ պահել, կասեցնել ոճրագործի ձեռքը. ոչ ոք չը կարողացաւ արգելել մի ամբողջ ազգի ոչնչացումը։

Անզօր եղան եւրօպական պետութիւնները. անզօր են այսօր ոճրագործի ձեռքը բռնելու և մեր հովանաւոր, պաշտպան պետութիւնները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան, որովհետև նրանք արդէն պատերազմ են մղում նրա հետ. անզօր եղան կամ չը կամեցան բռնել ոճրագործի ձեռքը չէզոք պետութիւնները՝ Ամերիկան. . . . .

. . . .

Այդպէս են դասաւորվել, ի մեծ թշուառութիւն հայերի, բոլոր պայմանները, որ անհնարին եղաւ որեւէ օգնութիւն և հայ ժողովուրդը Թիւրքիայում դատապարտվեց բնաջինջ լինելու, իսկ կոտորածից փախած նրա ողորմելի բեկորները, որոնք ապաստանեցին մեզ մօտ Կովկաս և Պարսկաստան, կրելով ճանապարհին սոսկալի նեղութիւններ, տանջանք, յոգնածութիւն և քաղց, ենթակայ եղան զանազան հիւանդութիւնների և նրանց մի ստուար մասն էլ սկսեց մահանալ։ Ի հարկէ, այդ փախստականներին կարելի էր փրկել այդ դրութիւնից, եթէ Վանի հայկական ղեկավար մարմինները հոգ տարած լինէին ուղեկցել նրանց, մնդական կայաններ հաստատել ճանապարհին. բայց, դժբաղդաբար, ...

. . . . . ժողովուրդը մնացել էր անտէր ու անօգնական։

Տարակոյս չը կայ, որ ապագայում, երբ դաշնակիցները յաղթող կը հանդիսանան, Թիւրքերը կը կրեն իրանց արժանաւոր պատիժը. բայց Հայաստանը և հայ ժողովուրդը վերականգնելը կամ անհնարին կը լինի այլ եւս և կամ շատ հեռաւոր ապագայի գործ։

Եւ այսօր մեզ մնում է միայն արձանագրել տխուր փաստը, որ փրկչական 1915 թուականին, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ, օր ցերեկով, կազմակերպված եղանակով, ջարդվեց, ոչնչացաւ մի ամբողջ ազգ, որ ապրում է 5—6000 տարիներից ի վեր. Այսօր մնում է արձանագրել այն տխուր և ամօթալի փաստը, որ հայութեան համայնական ջնջումը ծրագրեց և իրագործեց իթթիհադական կուսակցութիւնը, որի հետ մի հայ կուսակցութիւն էլ հաստատել էր մի քանի տարի առաջ «քիրվայութիւն» և անզգուշօրէն գործիք դարձել նրա ձեռքում, ապացուցանելով դրանով որ հայերը զուրկ են քաղաքական հեռատեսութեան և կանխատեսութեան ամենափոքր ընդունակութիւնից։

Եւ մեր պատմութիւնը շատ փաստեր է ներկայացնում, որ հայութեան գլխին հասած մեծամեծ աղէտների պատճառ են դարձել և նպաստել իրանք հայերը, դառնալով կոյր և անգիտակից գործիք թշնամիների ձեռքում։

Յամենայն դէպս, Իթթիհադի հետ կապած, կռված դաշնակցութիւնը, լինի դա գերմանացու, բուլղարի թէ հայի կողմից, մնալու է պատմութեան մէջ իբրև ամենաամօթալի և մեղապարտ մի վարմունք մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան պատմութեան առաջ. Այդ դաշնակցութիւնները զինեցին ոճրագործի ձեռքը։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
7—9 սեպտեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Սեպտեմբերի 5-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր։

Օլթիի ուղղութեամբ մեր հետախոյզ զօրախմբերը վանեցին Թիւրքերին Խիստափոր գիւղի մօտ։

Բասէնի հովտում մեր հետախոյզ զօրախմբերն աջող գործում են Էնդէկի մօտ։

Մանազկերտի ուղղութեամբ մեր հեծելազօրը ցրեց Թիւրքերին Ինջալուի և Ռուստեմ-գեադուկի մօտ և ձեռք ձգեց բեռնատար կենդանիներ։

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ.

Վանի շրջանում մեր և Թիւրքերի միջև հրացանաձգութիւն էր Անգղից դէպի հարաւ.

Սեպտեմբերի 6-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր։

Մանազկերտի ուղղութեամբ՝ Մօլլա-Ալի և Էկրէշ գիւղերի շրջաններում մեր հետախոյզ զօրախմբերն ընդհարվում են Թիւրքերի զօրախմբերի հետ.

Մնացած զօրաճակատում ռազմական ընդհարումներ չեղան.

Սեպտեմբերի 7-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր։

Օլթիի ուղղութեամբ մեր հետախոյզ զօրախմբերն աջողութեամբ գործում են Թէվի մօտ.

Նոր-Չէնի վրա յարձակում գործած Թիւրքաց զօրամասը ետ մղվեց իր համար մեծ կորուստներով.

Մանազկերտի ուղղութեամբ մեր հեծելազօրը ընդհարվում է քիւրդերի հետ.

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
7—8 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ. — Դաշնակից նաւատորմը ձեռք է ձգել նեղուցների մուտքի մօտ գերմանական մի սուզանաւ. Նաւաստիները գերված են։

Ստոյգ աղբիւրներից հաղորդում են, որ անգլիացիք իրանց վերջին աջողութիւններից յետոյ վերսկսել են իրանց արշաւանքը Գալիպօլի թերակղզում, նպատակ ունենալով ձեռք ձգել Հարտֆէրտ շրջանի վրա իշխող գագաթները։ Կարծում են, որ եթէ այդ գագաթները գրաւեն դաշնակիցները, որոնց դիրքերը զանազան կէտերում շատ խիստ ամրացված են, այն դէպքում դաշնակիցները կարող կը լինեն մօտիկ ապագայում պաշարել նեղուցը։

Թիւրքերը շտապով օգնութիւն են ուղարկում Դարդանէլ 7-րդ և 8-րդ զօրաբանակների կազմից, որոնք բաղկացած են արաբներից.

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
7 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.—Սամսոնից հաղորդում են, որ ձորերը լցվել են դիակներով։ Սըվազի, Երզրումի և Տրապիզօնի վիլայէթների բոլոր հայերը բնաջինջ են արված. Երեխաները և կանայք յանձնված են ալբան էմիգրանտներին։ Տեղի են ունենում աննկարագրելի գազանութիւններ։

5000 ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐ ԱԶԱՏՎԱԾ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ. — Ծովային մինիստրութիւնը յայտնում է.

Ֆրանսիական յածանաւերը ազատեցին 5000 հայերի, որոնք ապաստանել էին Ջէմբէլմուսի լեռներում՝ Անտիոքի նաւահանգստից դէպի հիւսիս, ուր նրանք պաշտպանվում էին Թիւրքերի դէմ յուլիսի վերջերից։ Նրանց ռազմական և ուտեստեղէնի պաշարը սպառվելու մօտ էր։ Հայերին յածանաւերով հասցրել են Պորտ-Սայիդ։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
7—8 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Թալէաթ-բէյը մեկնեց Ադրիանուպօլիս, որպէսզի հանգստացնէ ազգաբնակութեանը, որովհետև վերջինս յուզվել է բուլղարներին զիջումներ անելուց։

Զմիւռնիայից տեղեկացնում են, որ Թիւրքաց կառավարութիւնը զէնքի է կանչում Այդընի վիլայէթում 16—18 և 52—55 տարեկան բոլոր տղամարդկանց, որոնք ընդունակ են զէնք կրել։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Սօֆիայից հաղորդում են որ Դէդէաղաչի և Դիմօտէկայի զինւորական բերդապահները ստորագրելու են պայմանագիր այն մասին, որ Բուլղարիան իր տիրապետութեան տակ է առնում Թիւրքական այն հողաբաժինը, որ օսմանեան պետութիւնը զիջում է նրան։ Պայմանագիրը ստորագրվելու է Դիմօտէկայում հանդիսաւորութեամբ։ Պայմանագիրն արդէն վաւերացրել են սուլթանը և Ֆէրդինանդ արքան։

(Լրագիրներից)

◆ Աթէնքից հաղորդում են «Н. В.»-ին, որ դաշնակիցները արտակարգ պատրաստութիւններ են տեսնում Գալիպօլիում ընդհանուր յարձակում գործելու համար։ Նեղուցների մօտ կենտրոնացված են մեծ թւով ռազմանաւեր, որոնց վրա դրված են լայնաբերան թնդանօթներ.

◆ Հռոմից տեղեկացնում են «Н. В.»-ին, որ Թիւրքիայում նախատեսվում են լուրջ դէպքեր։ Քեամիլ-փաշան մտնում է ներկայ կառավարութեան հակառակորդների շարքը և կազմակերպելու է քաղաքացիական պատերազմ։ Թալէաթ-բէյը պատրաստվում է հաշւետեսնել Էնվէր-փաշայի և գերմանացիների հետ։ Սուլթանն անյայտացել է. Նրա ուր գտնվելու տեղը ոչ ոքի յայտնի չէ։

Վերջին տեղեկութիւններից երեւում է, որ Կ. Պոլսում սպասվում է յեղափոխութիւն։

◆ Վանից այսօրվա Թիֆլիս հասած մի անձից լսեցինք, որ վերջին նահանջից յետոյ Վանի Վարժապետանոցի, Երամեան վարժարանի, «Վան-Տոսպ» թերթի տպարանի, «Աւետիսեան» գրադ.-ընթերցարանի շինութիւնները փլատակների են վերածված. վառված են քիչ-շատ յայտնի և աչքի ընկնող տները, ինչպէս օրինակ Գափամաճեանների, Թէրզիպաշեանների, Ծիտէճեանների և այլոց բնակարանները։ Խաչփողոցի վրա եղած բոլոր կարեւոր շինութիւնները մոխրի են վերածված և տներից թանգարժէք իրեղէնները գրեթէ բոլորովին թալանված են։ Համեմատաբար քիչ է վնասվել Արարուց թաղը։

◆ «Н. В.»-ին հաղորդում են. «Թիւրքաց կառավարութիւնը Բեռլինի իր դեսպանին յանձնարարել է յայտնել, որ Թիւրքիան հնարաւորութիւն չունի շարունակել Գալիպօլիի պաշտպանութիւնը առանց Գերմանիայի շուտափոյթ օգնութեան»։

◆ Աթէնքում ստացված հաւաստի տեղեկութիւնների համաձայն, Թիւրքաց դասալիք զինւորների թիւը մեծ չափերի է հասնում։

◆ «Н. В.»-ին հեռագրում են Սօֆիայից, որ Թիւրք-բուլղարական համաձայնութիւնը տակաւին ստորագրված չէ։

◆ «В. В.»-ին հեռագրում են Սէվաստոպոլից. Սև ծովի ռուսական ջրերում ռմբակոծութեան ենթարկվեց Թիւրք-գերմանական մի սուզանաւ, ու արագ անյայտացաւ ջրի տակ։ Կարծում են, որ սուզանաւը ջրասուզվել է։

◆ Ալէքսանդրօպոլից մեզ գրում են. «Սեպտեմբերի 8-ին Իգդիրից գնացքով Ալէքսանդրօպօլ բերին և տարան Ներքին Նահանգները 531 գերի ասկեար։ Սեպտ. 9-ին Իգդիրից եկան 578 ասկեար գերվածներ և ուղարկվեցին նոյն գնացքով Ներքին Նահանգները»։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
7—8 սեպտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի շրջանում ընդհարումներ են Էկաու գետի մօտ. Թշնամու թնդանօթային կրակը սաստկանում է։ Մենք պայթեցրինք Աա գետի վրա գերմանացիների ձգած կամուրջը՝ Միտավայից դէպի հիւսիս-արեւմուտք։

Իլլուկստից դէպի հարաւ-արեւմուտք երկաթուղու շրջանում, կատաղի կռւի մէջ մեր զօրքերը նորից ձեռք ձգեցին իրանց նախկին խրամատները, որոնց մէջ գտան շատ հրացան, փամփուշտ և ռազմանիւթ։

Դվինսկից դէպի հարաւ-արեւմուտք խճուղու վրա կատաղի կռիւներ են։ Հակառակորդին մենք քշեցինք Վիդզի գիւղից։

Վիլնայի շրջանում մեր զօրքերը, Վիլիայի գետանցքներում տեղի ունեցած կռիւներից յետոյ, ետ քաշվեցին մի փոքր դէպի արեւելք։

Վիլէյկա-Մօլօդէչնօ զօրագծի շրջանում շատ տեղերում կռիւները շարունակվում են։ Գերմանացիների դէմ դիմադրելու ժամանակ մեր զօրքերը երեւան են հանում իրանց ռազմական ընդունակութիւնները, գործելով հանգիստ և հաւատով ամենածանր հանգամանքներում իսկ։

Բիենակոնի-Լիդա երկաթուղու շրջանում և Շարա գետի աջ ափում ոչինչ աչքի ընկնող գործողութիւն տեղի չունեցաւ։ Ստոխօդի մօտ՝ Կօվէլ-Սառնի երկաթուղագծից ոչ հեռու մեր զօրքերը սուիններով վանեցին հակառակորդին Ջէրակից և շատերին սրախողխող արին։

Լուցկից դէպի հիւսիս, Ռօժիշչէ շրջանում, մեր հեծելազօրը յարձակում գործեց աւստրիացիների վրա, հալածեց նրանց 4 վերստ տարածութեամբ, շատերին գնդակահարեց և աւելի քան 200 մարդու գերի բռնեց. մի ուրիշ հեծելագունդ, որ իր ժամանակին նկատեց հակառակորդին Կիվէրցի մօտից դէպի Լուցկ նահանջելիս, յարձակում գործեց նրա վրա, փախուստի դարձրեց նրան և գերեց 5 օֆիցեր, 500 զինւոր, ձեռք ձգեց շատ սայլեր, 10 խոհանոց և երաժշտախմբին։ Տիբելով Լուցկից դէպի հարաւ-արևելք գտնվող անտառին, մեր զօրքերը գերեցին 2 օֆիցեր ու մօտ 100 զինւոր։

Դուբնօյի շրջանում՝ Իվանիէ գիւղի մօտ սուինային կռւից յետոյ մեր զօրքերը վանեցին հակառակորդին։

Կրեմէնէցկա քաղաքից դէպի արևմուտք ու հիւսիս մեր զօրքերը ձեռք ձգեցին Սապանով և Դունաէվ գիւղերը, գերեցին մեծ թւով մարդ։ Հակառակորդի յարձակումները Վիշնէվցա քաղաքի մօտ մենք վանեցինք։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Դվինսկից դէպի հիւսիս-արևմուտք՝ Մունչէ գիւղի մօտ գերմանացիները մեր եռանդուն յարձակումից վանվեցին իրանց խրամատներից։ Դվինսկից դէպի հարաւ-արևմուտք ու դէպի հարաւ՝ Նովօ-Ալէքսանդրովսկ-Դրիսվեատա զօրաճակատի վրա կռիւները շարունակվում են։ Գերմանացիների լայնաբերան թնդանօթները ռմբակոծում են այդ զօրաճակատի մի քանի մասերը, կրակելով շատ անգամ խեղդող գազեր պարունակող ռումբեր։

Վիլնայից դէպի արևելք կռիւները շարունակվում են։

Բինեակոնի - Լիդա զօրաճակատի վրա և Մօլչադա գետի շրջանում աննշան ընդհարումներ են։

Տիրէժիօ - Պօդհայցէ զօրաճակատի վրա՝ Լուցկից դէպի արևելք, հակառակորդը արշաւանքի ձեռնարկեց, բայց վանվեց։ Գործը յաճախ սուինային յարձակումների է հասնում։ Մենք գերեցինք մօտ 700 զինւոր և ձեռք ձգեցինք 3 գնդացիր։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Ֆրիդրիխշտադէից դէպի հիւսիս-արևմուտք, Դէր Սարիգզէն գրաւելու ժամանակ մենք վերցրինք գերիներ և շատ զէնք։ Գառաղի կռիւները, որոնք շատ տեղերում հասնում են սուինային մարտերի, Դվինսկից դէպի արևմուտք գտնվող շրջանում չեն դադարում։ Այդ զօրաճակատի մի քանի կէտում հակառակորդի թնդանօթային կրակը մրրկային է։ Մօլօդէչնօյից դէպի արևմուտք, Լեբեդէվ գիւղի վրա յարձակվելիս մեր զօրքերը քշեցին գերմանացիներին և գրաւեցին գիւղը, ձեռք ձգելով 10 գնդացիր, մի թնդանօթ, ռազմամթերք ու գերիներ։ Նոյնպէս սուինային յարձակումով, յուսահատ դիմադրութիւնից յետոյ, մեր զօրքերը գրաւեցին Սմորգօն գիւղը, որտեղից գերմանացիք փախան անկարգ։ Գերեցինք 4 օֆիցեր և 350 զինւոր, վերցրինք 9 գնդացիր, 40 հեծանիւ, ձիեր և հեռախօսի պարագաներ։

Լիդայից դէպի արևելք հակառակորդը, որ հէնց այն է անցել էր Նամանուն գետը, նորից վանվեց աջ ափը։

Օրդնսկ Չրանցքից դէպի արևելք հակառակորդը վանվեց Լիշչա գիւղից, տալով գերիներ և գնդացիրներ։

Պրիպեատայից դէպի հարաւ և մնացած ամբողջ զօրաճակատում ոչինչ էական բան տեղի չունեցաւ։

Սև-ծովում՝ Բոսֆորի մօտ մեր ականանաւերը թնդանօթաձգութիւն ունեցան «Գեբէն» յածանաւի հետ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7—9 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արրասից դէպի հիւսիս և Նուլէտից ու Նոտր-Դամ-դէ-Լօրէտից դէպի արևելք շարունակվում է ուժեղ թնդանօթային կռիւ։ Մենք ամրացանք էն գետի աջ ափում։ Շամպանիում գերմանացիք ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցին Մուրմէլօնի մօտի տարածութիւնը։ Ֆրանսիական հրետանիները եռանդով պատասխանում էին։ Մասսի աջ ափում և Լօթարինգիայի զօրաճակատում մենք աջողութեամբ ռմբակոծեցինք թշնամու բանակները բերդային աշխատանքների ժամանակ։ Վօգէզներում մենք ռումբերի օգնութեամբ բաւականին առաջացել ենք։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

19 աէրօպլան առաւօտեան ռումբեր նետեցին Մօրանժից դէպի արևելք՝ Բենսդորֆ կայարանի վրա. մինոյն աէրօպլանները 100 ռումբ են նետել գնացքների և շինութիւնների վրա, որոնց խիստ վնասվել են։

Բէլգիայում՝ Բուսինէ շրջանում ուժեղ թնդանօթաձգութիւն էր։ Տաք հրացանաձգութիւն էր Արրասի շրջանում և Անիի մօտ Սոմմայի և Ուազի միջև նոյնպէս թնդանօթաձգութիւն է։ Թնդանօթային կռիւներ տեղի էին ունենում Շալօնի բանակից դէպի հիւսիս՝ Էնի և Արգօնների միջև, նաև Լօթարինգիայում։

Մեր օդագնացները գործում են աջողութեամբ Վերդէն-Մեց զօրագծում։

ԼՕՆԴՕՆ.—Ֆիլդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է. թշնամու թնդանօթային կրակը մեր զօրաճակատի վրա վերջին 2 օրում սաստկացաւ։ Մենք աջողութեամբ պատասխանում էինք։ Մեր թնդանօթային կրակից այրվեց Գաւուզէլի անտառի մի մասը։

Սեպտ. 6-ին տեղի ունեցան 9 օդային կռիւներ, որոնց ժամանակ մենք վայր գլորեցինք թշնամու 2 աէրօպլան։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 սեպտեմբերի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակը յայտնում է. Երեկվայ օրը ոչ մի լուրջ դէպք տեղի չունեցաւ. եղան միայն մի քանի՝ մեզ համար նպաստաւոր՝ աննշան ընդհարումներ։ Կարնիայում թշնամին, առաջանալով թնդանօթային կրակի պաշտպանութեամբ, ռմբակոծեց խեղդող գազերով Պուլարա գիւղը, բայց մեր հրետանիները շեշտակի կրակով ստիպեցին թշնամու թնդանօթներին լռել։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 սեպտեմբերի

ՆԻՇ.—Լոյս սեպտ. 7-ի գիշերը թշնամին կրակ բացեց մինոյն կէտերի վրա, ինչպէս երեք օր առաջ. մինոյն ժամանակ կրակում էր հետևակ զօրաբանակը, բայց ապարդիւն։ Թնդանօթային կռիւը տևեց գիշերվայ ժամը 12—1-ը. մեր թնդանօթները պատասխանում էին թոյլ։

Սեպտ. 6-ին Դունայի զօրաճակատը կատաղի ռմբակոծութեան ենթարկելու ժամանակ թշնամին 4 ժամվայ ընթացքում արձակեց մօտաւորապէս 800 ռումբ պղնձային թնդանօթներից և մօրտիրներից, ոչ մի հետևանքի չը հասնելով։

ԲՕԼՂԱՐԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 սեպտեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Բօլղարիայից ստացված տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ ձեռք են առնվում տենդային ռազմի միջոցներ և պատրաստվում են ընդհանուր զօրահանութեան։ Արքայական համապատասխան հրաման սպասվում է այսօր երեկոյեան կամ վաղը։ Ապրանքատար գնացքների երթևեկութիւնը դադարել է։ Բօլղար զօրքերը դիմում են դէպի սերբիական սահմանը։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Բեռլինից հաղորդում են. տեղիս բօլղարական միսսիան յայտարարում է, որ բօլղար կառավարութիւնը սեպտ. 9-ին նշանակել է ընդհանուր զօրահանութիւն։ Գերմանիայում բնակվող բոլոր բօլղարահպատակները հրաւիրվում են անմիջապէս հայրենիք վերադառնալ Ռումինիայի և Վիէննայի վրայով։

ՍՕՖԻԱ.—Զօրահանութեան յայտարարութիւն, որ այսօր էր լինելու, չեղաւ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Բօլղարիայի վրայով ապրանքների առաքումը դադարեց։ Բօլղարական իշխանութիւնները վերցրել են Ռամադանի մօտ՝ Դունայի վրայի շարժական կամուրջը։ Բուրժէնի մօտ աւստրիական սահմանը փակված է։ Ինչպէս ենթադրվում է, սեպտ. 10-ին կը փակվի սահմանը Պրեգզալի մօտ։

—

Լրագիրներից

«Р. В.»-ի Սոֆիայի թղթակիցը, բօլղարական գրաքննիչի արգելքի պատճառով, հեռագրում է Բուխարէստից, որ Բօլղարիան գտնվում է այնպիսի վճռի նախօրէին, որ կարող է չափազանց ծանր հետևանքներ ունենալ։ Այդ վճռի խափանելը կարող է միայն հրաշքով լինել։

«Р. Сл.»-ն և «Р. У.»-ն ստացել են մի շարք յուզիչ հեռագիրներ Սօֆիայից և Բուխարէստից՝ Բօլղարիայի հանդէս գալու մասին։

Հաղորդում են, որ Ֆէրդինանդ արքան ընդունեց օպպօզիցիայի ներկայացուցիչներին։ Ստամբուլսկին մատնանշեց, որ գահի վրա ծանր պատասխանատուութիւն է ընկնելու, եթէ Բօլղարիան նոր արկածախնդրութեան գիրկը նետվի։ Ֆէրդինանդը պատասխանեց, որ նրա խօսքերի սպառնական տոնը անտեղի է։

Մամուլն այդ ունկնդրութեան մէջ տեսնում է պատմական ակտ։

Սերբիական զօրքերը կենտրոնանում են բօլղարական սահմանի մօտ։ Կարծում են, որ Բօլղարիան հանդէս կը գայ 20 օր յետոյ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

7—9 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.— Կառավարական «Նէա-Էլլասը» հերքում է այն լուրերը, թէ Թագաւորի և Վենիզէլոսի միջև գոյութիւն ունի տարաձայնութիւն։

ՀՌՕՄ.—Նախագծված է կառուցանել Սավօյայում մի մեծ գործարան՝ պայթուցիկ նիւթեր պատրաստելու համար. գործարանում աշխատելու են 30,000 բանւոր, գործարանը կատարելու է նաև դաշնակիցների պատուէրները։

ԼՕՆԴՕՆ.—Լլօյդ-Ջօրջը հրատարակել է հետևեալ գրութիւնը. «Կառավարութիւնը իրան հաշիւ է տալիս, թէ անհրաժեշտ է տալ երկրին անհրաժեշտ ցուցմունքներ զինւորական ծառայութեան հարցի վերաբերմամբ։ Եթէ հանգամանքները ցոյց տան, որ սովորական զինւորական ծառայութիւնը անհրաժեշտ է Եւրօպան զինւորական դեսպօտիզմի յաղթանակից փրկելու նպատակով, այն ժամանակ հազիւ թէ գտնվի մի մարդ, որ դիմադրէ պարտադիր զինւորական ծառայութիւն մտցնելուն, իսկ եթէ գտնվի էլ, նա աջակցութիւն չի գտնի բանւորական դասակարգերից։ Միմիայն մեր բոլոր ուժերի գերագոյն լարումը հնարաւորութիւն կը տայ յաղթութիւն ձեռք բերել։ Ուստի ես պարտաւոր եմ ամեն հնարաւորը անել, որպէսզի աջողութիւնը ապահովեմ»։

ՊԱՐԻԶ.—Եկաւ ֆինանսների մինիստր Բարկը և կայարանում դիմաւորվեց ֆինանսների և արտաքին գործերի մինիստրների ներկայացուցիչներից։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Պրուսիայում ամուսնութիւններն աւելացնելու նպատակով վերացված է այն կանոնը, որի համաձայն 16 տարեկանից պակաս աղջիկները պէտք է ամուսնանալու համար մինիստրի թոյլտւութիւնը ստանային։ Այժմ դրա համար բաւական է ծնողական դատաւորի թոյլտւութիւնը։

ՊԱՐԻԶ.—Ֆինանսների մինիստրը ներկայ գտնվեց դեսպանատան մէջ կայացած անպաշտօնական նախաճաշին և երկար խօսեց Ռիբօյի հետ, որից յետոյ այցելութիւններ փոխանակեց Ֆրանսիական կառավարութեան այլ անդամների հետ և ընդունեց մամուլի ներկայացուցիչներից մի քանիսին։

Բարկը մաքսային տուրքերի դեպարտամենտի տնօրէն Շաուլէնի, քարտուղար Դիւշէնի և ֆինանսների մինիստրութեան գործակալ Ռաֆալովիչի հետ միասին մեկնեց Լօնդօն։ Ֆրանսիական ֆինանսների մինիստր Ռիբօն կը մեկնէ մի քանի օր յետոյ։

ՏՕԿԻՕ.—Ռուսական զինւորական պատուէրները աւելացնելու նպատակով «Ջիջի» լրագիրը պնդում է շուտով հիմնել հրացանի մասնաւոր գործարան և խորհուրդ է տալիս կառավարութեանը հրաժարվել եապօնական հրացան պատրաստելու գաղտնիքը պահպանելու սկզբունքից։ Ձեռնարկվել է ընդլայնելու Տօկիօյի զինանոցը, բացվում են նոր արհեստանոցներ Իօկոսուկում։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը յատկացրեց 7 միլիոն ռուբլի Կարմիր Խաչին հերթական կարիքների համար և, 2.762.000 ր.՝ Մօսկվայի քաղ. ինքնավարութեանը՝ վիրաւոր ու հիւանդ զինւորների համար նոր հիւանդանոցներ պահպանելու։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Մինիստրների խորհուրդը յատկացրեց Գերմանիա մեկնած ռուս գթութեան քոյրերի կազմակերպութեան տակ 100,000 ռուբլի մեր կարիքաւոր գերիներին բաժանելու համար. բացի դրանից՝ գթութեան քոյրերին յանձնված է գերիների համար 30,000 ր. Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի անձնական միջոցներից, 30,000 ր. Կարմիր Խաչի միջոցներից և 10,000 ր. մասնաւոր նուիրաբերութիւններից։

ԼՕՆԴՕՆ.—Եկաւ մինիստր Բարկը։

ՄՕՍԿՎԱ.—Համազէմստվոյին և համաքաղաքային միութիւնների միացեալ սեկցիաները փախստականներին օգնելու վերաբերութեամբ ընդունեցին հետևեալ բանաձևերը. 1) միայն երկրի բոլոր գործունեայ ուժերի համերաշխ միացեալ աշխատանքը՝ զէմստվոյին և քաղաքային միութիւնների կեդրոնական մարմինների ղեկավարութեամբ՝ կարող է որոշ կարգուկանոն մտցնել փախստականներին տեղաւորելու գործի մէջ. 2) փախստականներին օգնելու գործը չէ կարող չը ճանաչվել պետական գործ. 3) ի հաստատումն միութիւնների արդէն կատարած ծախքերի և սկսած ձեռնարկութիւնները շարունակելու և զարգացնելու համար, նաև այդ ձեռնարկութիւնները տեղական յատուկ մարմինների ձեռքով իրականացնելու համար պէտք է անմիջապէս յատկացվեն կառավարութեան ձեռքով գումարներ պետական գանձատան միջոցներից։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Ներկայացնելով համայնքների պալատին նոր ֆինանսական տարվայ զինւորական բիւջէն, Մակկէննա յայտնեց, որ եկամտային հարկը 40%-ով աւելացնելը այս տարի կը տայ 11.274,000 ֆունտ ստէրլինգ, իսկ ամբողջ տարվայ մէջ՝ 37.400,000։ Բոլոր հարկերի համագումարն է ներկայ տարում 19.424,000, իսկ ամբողջ տարում՝ 77.085,000 ֆունտ ստէրլինգ։ Աւելացվելու են նաև շաքարի, թէյի, ծխախոտի, սուրճի, կակաօյի, ցիկորի, չորացրած մրգերի մաքսը։ Գարեջրի և ոգելից ըմպելիքների ակցիզային տուրքը չի փոխվի։ Աւելացվելու են նաև մօտորների վառելանիւթի և պատրաստի դեղօրայքի հարկերը։ Տուրք է դրվելու Անգլիա ներմուծվող շքեղութեան առարկաների, աւտօմօբիլների, կինեմատօգրաֆիական ժապաւէնների, ժամացոյցների, երաժշտական գործիքների, հայելիների, գլխարկների վրա։ Այդ աղբիւրներից եկամուտները կը կազմեն ընդամենը ամբողջ տարում 102.155,000 ֆունտ ստէրլինգ։ Աւելացվելու են նամակադրոշմերի վճարները պօստային առաքումների համար։

Նախնական հաշւով ներկայ ֆինանսական տարում ամբողջ եկամուտը կազմեց 305 միլիոն ֆունտ ստէրլինգ, իսկ ամբողջ տարում սպասվում է 387 միլիոն ֆունտ։

Վերջում Մակկէննա ասաց, որ հարկաւոր կը լինի դիմել նոր փոխառութիւնների։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Սեպտեմբերի վերջերին Պետրօգրադում, Շինգարէվի նախաձեռնութեամբ հանգանակվելու է պղինձ, արճիճ և այլն։

◆ Ռումինիայում երթևեկում են միայն զինւորական գնացքներ, օտարազգիները ցուցակագրվում են։

◆ «Դէյլի Մէյլի» ասելով, գերմանական կօրուստները, համաձայն հրատարակված ցուցակների, կազմում են 2½ միլիոն մարդ։

◆ Յունաց թագաւոր Կոնստանտինը «Բերլ. Տագ.»-ի թղթակցին յայտնել է, թէ Յունաստանը կարող կը լինի պահել չէզոքութիւնը։

◆ «Н. В.»-ն ասում է, որ, Եկաւս գետի մօտ սկսված կռիւները ստիպում են ենթադրել, որ սկսվում են պատերազմական գործողութիւններ Րիգայի դէմ։

◆ «Б. В.»-ն ընդգծում է, որ զինւորական շրջաններից բղխող տեղեկութիւնների համաձայն, մեզ միանգամայն աջողվեց նահանջել և դուրս գալ այն դժուարին դրութիւնից, որի մէջ գտնվում էին Վիլնայի զօրամասերը, որոնք պաշարված էին թշնամուց երեք կողմից։ Գրաւելով Վիլնան, թշնամին սակայն չը տարածվեց ամբողջ շրջանում, այլ բանակեց միայն այն մասում, որ ընկած է Վիլնայից դէպի Մերէչանկա գետը։ Մինչև որ թշնամին չը գրաւի Լիդա և Մօլօդէչնօ երկաթուղային ցանցերը և չը վերականգնէ մեր զօրքերի փչացրած ճանապարհները, ոչ մի առաւելութիւն Վիլնայի գրաւելուց նա չի ստանայ։ Պէտք է կարծել, որ թշնամին արշաւանքի կը ձեռնարկէ երեք ուղղութեամբ. դէպի Դվինսկ, Լիդա և Մօլօդէչնօ, որպէսզի ելնէ Մինսկի կողմը, միանալու համար Պօլեսիէում գործող իր զօրաբանակին։

◆ Սօֆիայից հեռագրում են, որ լուր տարածվեց ազգային ժողովը գումարելու մասին։

◆ «Փօսիշէ-Ցայտունգի» տեղեկութիւնների համաձայն, Ռումինիան արտակարգ միջոցներ է ձեռք առել ռումին-աւստրիական սահմանագլխում։

◆ Աւստրիական գլխաւոր բանակը յայտնում է, որ Սերբիայի դէմ արշաւանքը վերսկսվել է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք 1) Հ. Բ. Ընկ. Գորու ճիւղի վարչութեան միջոցով, պօրուչիկ Գարեգին Տէր-Սահակեանից 2 ր., 2) Թիֆլիսում, Արշակ Ղուլեանից, ախտական վճար 5 ր.։

Ստացանք Ալուպկայից, Յ. Յովհաննեանից 15 ռուբլի։

ՑՈՒՑԱԿ

Թիֆլիսի քաղ. սուր-վարակիչ հիւանդանոցի (№ 37) նուիրատուների

(Օգուտ հայ կամաւորների և հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 179)

Ա. Ս. Սարգիսով 10 ր., Գ. Ն. Ակսելօս, Գ. Բ. Մուկարով 5-ական ր., Ս. Գ. Սօսեան, Ս. Դ. Դաւիթեան, Լ. Ս. Մէլքով, Կ. Կ. Կաչանովսկի, Մ. Ի. Ֆալէևա 3-ական ր., Բ. Ա. Գերշանսկի, Վ. Նիկօլաիդիս, Սարգիսեան 2-ական ր., Ս. Միրագով 1 ր. 50 կ., Գ. Ե. Ցիցկիշվիլի, Տ. Մ. Սերգէևա, Շ. Տ. Թումանեան, Ա. Ի. Գրեչնևա, Ե. Ի. Պետրօսօն, Ա. Մ. Բաբաջանովա, Սաֆարեան, Ի. Օհանջանեան, Օ. Բաբիլուեան, Զ. Սոլոմոնով, Բ. Սարգիսով, Ի. Ա. Մուրադով, Գ. Մելիք-Շահնազարով, Ս. Նազարեան, Օ. Աւանէսեան 1-ական ր., Դ. Մ. Մարանեկի, Լ. Լալայեան, Մ. Ծատուրով, Կ. Մանուկով, Վ. Ջիկվիլաձէ, Ս. Մամլաձէ, Ս. Ժամկոչեան, Տ. Կաչարեան, Խաչատուրեան, Մ. Կացիեան, Ս. Կալաչեան, Գ. Գիւլբենեան, Մ. Վարդանեան, Ա. Աստուրեանի, Գ. Յարութինով 50-ական կոպ., Վ. Ռ. Մասլիւկովա 30 կ., Դ. Զուբինիձէ 20 կ., Մանուէլեան 10 կ.։

Ընդամենը 65 ր. 60 կ., որպիսի գումարից, ըստ ցանկութեան նուիրատուների, յատկացված է 32 ր. 80 կ. հայ կամաւորներին, իսկ միւս կէսը՝ յօգուտ հայ փախստականների։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Աննենֆելդ, 7 սեպտ.

Այսօր առ. ժ. 6-ին տեղս հասաւ Էջմիածնից փոխադրվող փախստականների երկրորդ խումբը 618 հոգուց, բաղկացած։ Առողջական դրութիւնը բաւարար է. ճանապարհին մեռել են 2 հոգի, հիւանդացել և առանձնացվել են 14 հոգի։ Այժմ, երբ այստեղ ժողովվել են 3000-ի չափ գաղթականներ և գալու են էլի մի հազար, ահագին կարիք կայ աշխատաւոր ձեռքերի ինտելիգենցիայից, քանի որ բոլորը գտնվում են մեզ օտար գերմանացիների մէջ. Գանձակից ոչ մի մարդ չը կայ... Աշխատողները տեղում ընդամենը 2—3 հոգի են։

Ա. Աթանասեան

—

Թիֆլիսի հայոց առաջնորդը Պետրօգրադից Պետական Դումայի անդամ Պապաջանեանից ստացել է հետևեալ հեռագիրը.

«Իմ առաջարկի համաձայն, Պետական Դուման քննութեան առաւ փախստականների մասին օրէնսգիծը։ Ներքին գործերի մինիստրին կից եղած յատուկ խորհրդակցութեան մէջ, ինչպէս արդէն հեռագրել եմ, մտցված է նաև Հայկական Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչը։ Օրէնսգիծը վաւերացված է։ Հինգշաբթի տեղի կունենայ յատուկ խորհրդակցութեան առաջին նիստը։ Խնդրում եմ ընտրել ներկայացուցիչ։ Հեռագրեցէք ինձ մինիստրին յայտնելու համար։ Պետրօգրադի հայկական կոմիտէն և ես առաջարկում ենք ընտրել Այէամեանին։ Խորհրդակցութեանը ես մասնակցում եմ Դումայի ընտրութեամբ. խնդրում եմ շտապել»։

Հայ փախստական որբերի Կրծանիսի ապաստարանում ներկայումս խնամվում են 330 որբեր, 1-ից մինչև 16 տարեկան։ Նրանցից Միրզոևի վանքի շէնքի 10 սենեակներում տեղաւորված են 195 որբեր, որոնցից 111-ը աղջիկ են, 80-ը տղայ. Ցուբինեանի շէնքի 6 սենեակներում տեղաւորված են 115 հոգի, որոնցից տղայ՝ 47, աղջիկ 68. Հ. Մելիքեանի շէնքի երեք սենեակներում տեղաւորված են 30 հոգի, որոնցից տղայ 14, աղջիկ 16։ Եկեղեցապատկան շէնքում և Ցուբինեանի տանը ապաստանած որբերի ծախքը հոգում է Համառուսական Քաղաքների Միութիւնը, իսկ Մելիքեանի տանը տեղաւորված որբերին իր հաշւով պահում է Հայ Օրիորդների Կոմիտէն։ Որբերը հագնված են մաքուր և խնամվում են կանոնաւոր։ Նրանց խնամող տիկինները, օրիորդներն ու պարմաններն ամեն հնար գործ են դնում զւարճացնել որբերին։ Զգացվում է խաղալիքների պակասութիւն։ Երեխաների մէջ վարակիչ հիւանդութիւններ չը կան. կայ միայն դեզինտերիա, որը մեծ չափերի չէ հասնում։ Բաւական տարածված է աչքացաւը, որը մաքրութիւն պահպանելու շնորհիւ՝ կամաց կամաց վերջանում է։

—

Քաղաքների Միութեան Կովկասի ճիւղի ստացած տեղեկութիւնների համաձայն, Էջմիածնում եղած փախստականների թիւը հասել է մինչև 16,000 մարդ։

—

Սեպտ. 12-ին Թիֆլիսից Էջմիածին կուղարկվի Քաղաքների Միութեան Կովկասի ճիւղի կազմակերպած երրորդ սանիտարական ախտահանիչ խմբակը։

—

Նպաստամատոյց Ընկերութեան հաշւով բացված որբանոցն արդէն պատրաստ լինելով, նախորդ օրը որբանոցի վարչութիւնը ընդունեց մօտ 70 որբ։ Որբերի թիւը, բնակարանի նեղութեան պատճառով, առ այժմ 110—120-ից աւելի չը պէտք է լինի, թէև որոշված է պահել 300 որբ։

—

Ներկայումս թոյլատրված է փախստականներին տեղափոխել երկաթուղիներով, այն պայմանով սակայն, որ նրանք 5-օրեայ կարանտին պահեն։ Տեղափոխել թոյլատրվում է միայն առողջ փախստականներին։

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Երկուշաբթի, սեպտ. 7-ին, Թիֆլիսի հայոց առաջնորդարանում կայացաւ խորհրդակցութիւն, որին հրաւիրված էին մասնակցելու հայկական կուլտուրական-դպրոցական-բարեգործական հիմնարկութիւնները, որոշելու ինչ ձևով աջերթ մաղթելու Կովկասի նախկին փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվին, որ գալու է Թիֆլիս սեպտ. 15—16-ին, մնալու այստեղ մի քանի օր և ապա մեկնելու Ռուսաստան։

Խորհրդակցութեանը ներկայ էին մօտ 30 ներկայացուցիչներ։ Խորհրդակցութիւնը, որին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը բացատրեց գումարման նպատակը, գտաւ, որ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի օրով հայկական կուլտուրական-լուսաւորական և դպրոցական հաստատութիւնները ոչ մի խոչընդոտի չեն հանդիպել իրանց զարգացման մէջ և նրանց հնարաւորութիւն է տրվել զարգանալ, ուստի և բարոյական պարտք կայ այդ հիմնարկութիւնների վրա արտայայտել շնորհակալական և երախտագիտական զգացմունք այն ժամին, երբ նա թողնում է Կովկասը։ Այդ նպատակով խորհրդակցութիւնը որոշեց ընտրել մի մասնաժողով, որին յանձնվեց պատրաստել ուղերձ, որ պէտք է տրվի հայկական հիմնարկութիւնների կողմից, որոշել պատգամաւորութեան կազմը և իր ժամանակին ներկայացնել ու ողջերթ մաղթել։ Մասնաժողովի անդամներ ընտրվեցին պ. պ. Գ. Մելիք-Ղարագեօզեան, Ս. Մալխասեան, Հ. Առաքելեան, Ց. Խօսնունց և իշխ. Մ. Թումանեան։

Վերջնական խորհրդակցութիւնը կայացաւ սեպտ. 10-ին, առաջնորդարանում, և ընդունեց մասնաժողովի պատրաստած ուղերձը, որին պէտք է ստորագրեն հայկական հիմնարկութիւնների նախագահները։

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՈՐՈՇՈՒՄՆ

Սխալ է կարծել, թէ գիտութիւնը, որի մէջ և ազգագրութիւնը, խաղաղ ժամանակի գործ է. դատարկ և անբեղմնաւոր մտքերը հանգիստ և անդորր օրերում նոյն իսկ անարգիւնաւէտ են և ամուլ. մինչդեռ նախաձեռնող և բեղմնաւոր մտքերը արհաւիրքի և ասկումի օրերում մինչև իսկ ժամանակ և հնարաւորութիւն են գտնում գիտութեամբ պարապելու և նոր անորոշներ յայտնագործելու։ Հայերս, գոհունակութեամբ պէտք է արձանագրենք, ցոյց տալինք մեր կենսունակութիւնը. վերջերս այդ ապացոյցը տուեց Նպաստամատոյց Ընկերութիւնը, որ ընդառաջ գնաց Հայ Ազգագրական Ընկերութեան առաջարկին՝ յատկացնել մի գումար, որով կարելի լինի ինտելիգենտ փախստականներին վարձատրել և յանձնարարել նրանց հաւաքել փախստականների մէջ շրջագայելով, հայկական բանահիւսութեան վերաբերեալ զանազան նիւթեր։ Այդ նպատակի համար Նպաստամատոյցը իր միջոցներից յատկացրել է 1000 ր., իսկ «Մշակի» խմբագրութիւնը, համակրութեամբ վերաբերվելով այդ նպատակին, նոյնպէս յատկացրել է 1000 ր.։ Բայց պարզ է, որ 2000 ռուբլով չէ կարելի գործին լայն ընդարձակում տալ և շատերին գործի հրաւիրել։

Նպաստամատոյցի և «Մշակի» օրինակին պէտք է հետևեն և միւս հաստատութիւնները և հարուստ անհատները։ Ազգագրական նիւթերը, բանաւոր գրականութեան, աւանդութիւնների, ժողովրդական երգերը, հասկացողութիւնների, հեքիաթների, առածների, առակների և հանելուկների արձանագրումը ներկայ պայմաններում ունի իր առանձին արժէքը։ Ի հարկէ առաջնակարգ պահանջ է գաղթականներին նիւթապէս նպաստելը, նրանց կերակրելը և բժշկելը. բայց այդ առաջնակարգ պահանջը ծածկելու և մթագնելու չէ և միւս պահանջները՝ հոգեկան և մտաւոր բեկորների ժողովման ոչ նուազ անհրաժեշտ և կարևոր գործը. մենք հաւաքելու և կարգաւորելու ենք մեր թիւրքահայ տառապող ժողովրդի հոգեկան ունակութիւնները, որոնք որքան էլ աղքատ, պարզ և անպաճոյճ լինեն, շատ արժէքային և գնահատելի են մեր ընդհանուր զանգուածի կուլտուրական զարգացման, գրականութեան և բանասիրութեան համար։

Ողջունելով Նպաստամատոյց և Ազգագրական ընկերութիւնների ձեռնարկը, մենք ջերմ կոչ ենք անում հայ հասարակութեանը՝ նպաստելու, որ աւելի ընդարձակվի գործը և աւելի շատ աշխատաւորներ գործի հրաւիրվեն։

Մի՛ խնայէք ձեր նպաստները այդ լաւ նպատակի համար։ Գ. Տ.-Ռ.

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱԶԵՄՍՏՎԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 սեպտեմբերի

ՄՈՍԿՎԱ.—Բացվեցին քաղաքների համառուսական միութեան ներկայացուցիչների և զեմստվօների ու զեմստվային միութեան լիազօրների համագումարները։

Առաջինի ծրագրի մէջ մտնում են վիրաւորներին կռուի դաշտից փոխադրելու, պլանը փոխելու, փախստականներին օգնելու, զօրքի պիտոյքները հայթայթելու և սանիտարական ձեռնարկութիւնների հարցերը. երկրորդի ծրագրի մէջ են՝ զօրքի պիտոյքները մատակարարելու, փախստականների օգնութեան գործի դրութեան և երկրի ներսում նոր լազարէթներ բանալու խնդիրները։

—

(Լ ր ա գ ի ր ն ե ր ի ց)

Ինչպէս հեռագրում են Մոսկվայից, սեպտ. 7-ին բացվեցին քաղաքների և զեմստվօների ներկայացուցիչների համագումարները Մոսկվայի քաղաքագլուխ Չելնոկովի նախագահութեամբ։

Ներկայ են մօտ 20 ներկայացուցիչներ։

Աշխատանքները սկսվեցին քաղաքական մասից։ Չելնոկովի, Աստրովի, Նեկրասովի, Ա. Գուչկովի, Շինգարևի և այլոց ճառերից յետոյ ընդունվեցին հետևեալ երկու յօդուածը թէ՝ անհրաժեշտ է վերակազմված մինիստրութիւն և գումարել Պետական Դուման։

Այդ բանաձևը կազմելու գործը յանձնվեց գլխաւոր կոմիտէտին։

Նախագծված է պատգամաւորութիւն ուղարկել Թագաւոր Կայսրի մօտ համագումարների անունից։

◆ Մոսկվայում քաղաքների ներկայացուցիչների համագումարում հարց յարուցվեց պատգամաւորներ Չխէիձէին, Կերենսկիին և Կրիմին հրաւիրելու մասին։ Չելնոկովը սեփական իշխանութեամբ մերժեց այդ առաջարկութիւնը, առաջ բերելով մեծամասնութեան բողոքը։ Համագումարի անդամ Ֆեդօրովը յայտնեց, որ պէտք է քանդել միջնապատը, ուղարկելով պատգամաւորութիւն Կայսրի մօտ։ Մարգուլիէսը խօսեց պատգամաւորութիւն ուղարկելու դէմ, գտնելով որ դա XVII դարի ճանապարհն է։ Գուչկովը հրաւիրում է համագումարին բաւականանալ Պետ. Դուման գումարելու և վերակազմված մինիստրութիւն կազմելու պահանջներով։ Վերջում ընտրվեց մասնաժողով՝ բանաձև մշակելու և գործադրելու համար։

◆ Մոսկվայում զեմստվային համագումարում մեծամասնութիւնը խօսեց պատգամաւորութիւն ուղարկելու օգտին։ Կրակոտ ճառեր արտասանեցին Գուրկօն, Տրուբեցկոյը, Մելլեր-Զակոմէլսկին։ Ալեքսանդրովը խօսեց գիւղացիներին իրաւունքներ տալու անհրաժեշտութեան մասին։ Ոմանք առաջարկում են հէնց այժմ ուրուագծել ապագայ մինիստրութեան կազմը։ Ընտրվում է յատուկ մասնաժողով բանաձև մշակելու համար։ Փախստականների հարցի քննութեան ժամանակ մեծ տպաւորութիւն գործեց Բէնհրատեանի ճառը հայ-փախստականների մասին։

◆ Զեմստվօների և քաղաքների համագումարին ներկայացաւ բանուորների պատգամաւորութիւնը, բայց նրան թոյլ չը տուին։ Կուլուարներում կայացաւ բանուորների խորհրդակցութիւն Չխէիձէի և Կերենսկիի մասնակցութեամբ։ Քննվեց ներկայ քաղաքական դրութիւնը։ Կերենսկին խօսեց գործադուլի դէմ ներկայ րոպէին։

◆ Մոսկվայից վերջին հեռագիրը յայտնում է, որ զեմստվային համագումարի մասնաժողովը որոշեց իր բանաձևի թէզիսները. պատերազմը՝ մինչև վերջ, վերսկսել Դումայի զբաղմունքները, հասարակական վստահութիւնը վայելող մինիստրութիւն և կոչ՝ հանգիստ մնալու։

◆ Կադէտների խորհրդակցութիւնը Մոսկվայում խօսել է պատասխանատու մինիստրութեան դէմ և յօգուտ պատգամաւորութիւն ուղարկելու։

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՒԸ

Մոսկվայից հեռագրում են «Р. Слово» թերթին հետևեալը.

Հոկտեմբերեանների կենտրոնական կոմիտէտի նիստում Ա. Ի. Գուչկովի ճառից յետոյ ընդունվեց բանաձև։

Բանաձևի առաջին մասում նկարագրվում է րօպէի հետ կապված երկրի դրութիւնը։ Միութիւն,—ահա այն համաժողովրդական հոգեկան շարժումը, որով համակվել են բոլոր քաղաքացիք. կուսակցական ֆանատիկոսութիւնն անյայտացել է. առեղծվեց առաջադէմ բլոկ, որ առաջադրեց մի քանի չափաւոր պահանջներ, թելադրված րօպէի աղաղակող հրամաններից։ Ռուսաստանի բոլոր զաւակները գտնվում են համաժողովրդական ռուսական շարժման ընթացքի մէջ. միայն ռուս կառավարութիւնն է, որ դուրս է այդ շարժումից։ Կառավարութեան այդօրինակ դրութիւնը պարտաւորեցրեց բլոկին մատնանշել, թէ անհրաժեշտ է կազմել հասարակութեան վստահութիւնը վայելող, համբերատար և իրաւակարգ քաղաքացիների վերաբերութեամբ մեղմիչ միջոցներ ձեռք առնող մինիստրութիւն։ Դրան պատասխան եղաւ պալատների զբաղմունքների անսպասելի դադարումը։

Ապա բանաձևի վերջին մասը ասում է, որ այդօրինակ կացութիւնը պարտաւորեցնում է հոկտ. 17-ի միութեանը կայացնել հետևեալը.

Միութիւնը համոզված է, որ հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործը պահանջում է մի կառավարութիւն, որ վայելում է երկրի վստահութիւնը. անհրաժեշտ է շատ շուտով վերսկսել պալատների գործունէութիւնը։ Միութիւնը ողջունում է առաջադէմ բլօկին և կամենում է, որպէսզի նա պահպանէ խաղաղութիւն սերմանող կազմակերպութեան դերը։ Ոչ ոք չը պէտք է հրաժարվէ մեր քաջարի զօրքի համար աշխատելուց։ Ամեն մինը պէտք է յիշէ, որ աշխատանքից հրաժարվելը աջակցութիւն կը լինի մեզ անտեսանելի այն չար ուժերին, որոնք հետամուտ են թուլացնելու մեր ուժը և ուժեղացնելու թշնամուն։ Ամեն մէկը պէտք է գիտենայ, որ անգամ ամեն մի անհատական դէպք, որ ներհակում է մեր զօրքի պիտոյքների համար կատարվող աշխատանքին, կարող է զէնք ծառայել ռուս գործի այն դաւաճանների ձեռքում, որոնք աշխատում են առաջ բերել անկարգութիւններ, որպէսզի կարելի լինի վանել այն յանցաւոր կարծիքը, թէ երբ թշնամու դէմ կռուելը անկարելի է ներքին անհամաձայնութեան պատճառով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Քաղ. դուման նախկին փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի միջոցով ստացել է Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի հետևեալ Բարձրագոյն հեռագիրը.

«Յանձնարարում եմ ձեզ, կոմս, հաղորդել Թիֆլիսի քաղաքային դումային Իմ շնորհակալութիւնը արտայայտված զգացմունքների և բարեմաղթութիւնների համար։ ՆԻԿՈԼԱՅ»։

Բարձրագոյն այդ հեռագիրը ստացվել է որպէս պատասխան կոմս Վորոնցով-Դաշկովի՝ Նորին Կայսերական Մեծութեանն ուղարկած հետևեալ հեռագրի.

«Թիֆլիսի քաղ. դուման խնդրում է ինձ արկանել առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան հաւատարիմ հպատակութեան զգացմունքների հետևեալ արտայայտութիւնը։ Հինաւուրց Թիֆլիսի ազգաբնակութիւնը հոգեկան բարձր տրամադրութեամբ լսեց Ձերդ Կայսերական Մեծութեան կամքի յայտարարութիւնը, պատերազմի դաշտում գտնվող բոլոր զինված ուժերի ղեկավարութիւնը Ձեր վրա վերցնելու մասին։ Նորին հաւատով և հպարտութեամբ դիտելով Ձերդ Մեծութեան քաջարի զօրքն և նաւատորմը, ամբողջ երկիրը պէտք է միանայ անդուլ աշխատանքով, մատակարարելու զօրքին այն բոլորը, ինչ անհրաժեշտ է նրա պարենաւորման և զինաւորման համար։ Ժողովրդի և իշխանութեան կուռ և անքակտելի միացումը կը տայ պետութեանը այն անհրաժեշտ հզօրութիւնը, որը այնքան կարևոր է վերջնականապէս ջախջախելու յանդուգն և ուժեղ թշնամուն։ Թիֆլիսի քաղ. դուման համարձակվում է ամենահպատակաբար յայտնել իր կարծիքը, որ այդ միացումը ամենալաւ կերպով կիրագործվի, եթէ առեղծվի հասարակութեան վստահութեամբ ուժեղ մի կառավարութիւն։ Թիֆլիսի քաղ. դուման արկանում է առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան հաւատարիմ հպատակութեան իր զգացմունքները և վերառաքում առ Բարձրեալն ջերմ աղօթքներ յաղթութիւն պարգևելու մեր հերոսական զօրքին։ Պարտք եմ համարում վերոգրեալը արկանել Ձերդ Կայսերական Մեծութեան ամենաողորմած բարեհայեցողութեանը։ Գեներալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկով»։

◆ Վրաստանի էքզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչից ստացաւ հետևեալ հեռագիրը.

«Սրտանց շնորհակալ եմ ձեզնից, սրբազան, ձեր աղօթքների և ողջոյնի համար։ Գեներալ ադիւտանտ Նիկոլայ»։

Բարձրագոյն այս հեռագիրը պատասխան է էքզարխի հետևեալ հեռագրին.

«Պերշինօ. Ն. Կ. Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչին, Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքային.

«Ուղղափառ Վրաստանը եղբայր ռուս ազգաբնակութեան հետ միասին, և էքզարխութեան բազմացեղ ամբողջ հօտը, և հոգևորականութիւնը, որ անկեղծ հաւատարիմ հպատակներ են իրանց Թագաւոր Կայսրին, հիացմունքով հետևելով Ձերդ Կայսերական Բարձրութեան ասպետական արիութեանը և բարձր քաջութեանը, որպէս ռուս զինւորականութեան Գերագոյն Զօրահրամանատարի, այժմ բաղդաւորված ենք Միապետի դէպի Կովկաս բազմացեղ իր հաւատարիմ հպատակները ցոյց տուած առանձին ողորմածութիւնից, որը արտայայտվեց բարձրագոյն կոչմանքի մէջ, որով Ձերդ Կայսերական Բարձրութիւնը կոչվում է ծառայելու ի փառս Աստուածածնի,—ուրախութեամբ, ինձ հետ միասին, Ձերդ Կայսերական Բարձրութեան յայտնում են իրանց սրտագին ողջոյնը այս նշանակման համար, ջերմապէս աղօթում են Աստուծուն և աղերսում Աստուածածնին, իրանց երկնային հովանաւորին, որ Աստուծու ողորմած օգնութիւնը գայ Ձեր Կայսերական Բարձրութեանը Ձեր առաջիկայ աշխատանքում, օրհնեալ Կովկասում։ Ձերդ Կայսերական Բարձրութեան նուիրված աղօթաւոր՝ Վրաստանի էքզարխ Պիտիրիմ»։

◆ Քաղ. վարչութիւնը կարգադրել է, որպէսզի նոր փոխարքայ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի գալստեան օրը կարգի բերվեն բոլոր փողոցներն ու սալայատակները, որոնցով անցնելու է Նորին Բարձրութիւնը կայարանից մինչև պալատ։ Երկու օր է արդէն ձեռնարկել են այդ աշխատանքներին։

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով՝ դիւանապետ Բագրատ եպիսկոպոսը հեռագրել է Թիֆլիսի առաջնորդին, որ մի արտակարգ պատգամաւորութիւն է գալու Էջմիածնից՝ ողջունելու Նորին Վեհափառութեան կողմից Կովկասի Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի գալուստը։ Պատգամաւորութեան կազմը դեռ յայտնի չէ։

◆ Քաղաքագլուխը Պետրոգրադից՝ Պետական Դումայի անդամ Պապաջանեանից ստացել է հետևեալ հեռագիրը. «Սանիտարական մասի գլխաւոր կառավարիչի դիւանատան կարգադրութեան համաձայն՝ իշխ. Վասիլչիկովը կարգադրել է արևմտեան ֆրօնտի էվակուացիայի ենթարկված քաղաքներից թիւրքահայ փախստականների կուտակման վայրերը, Էջմիածին և Երևան ուղարկել 2 զինւորական հիւանդանոց, իւրաքանչիւրը 420 մահճակալով։ Դրա հետ միաժամանակ առաջարկել է Վլադիկավկազի երկաթուղու վարչութեանը՝ նոյն տեղն ուղարկել սննդատու կէտերի համար 2 կոմպլեկտ զինւորական խոհանոց ծառայողների հետ միասին։ Թիֆլիսից պէտք է ուղարկվի ծառայողների մի խումբ՝ փախստականների բժշկութիւնը, պարենաւորումը և զանազան տեղեր ուղարկելը կազմակերպելու համար, որ հաւանականաբար կը յանձնվի Քաղաքների Միութեանը։ Իմ խնդրանօք և սենատոր Նէյդգարդտի աջակցութեամբ Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայևնայի կոմիտէն դրել է իմ և Պետրոգրադի հայկական կոմիտէի տրամադրութեան տակ սանիտարական-սննդատու խմբակներ կազմակերպելու համար միանուագ 10,000 ր. և ամսական 1000 ր.։ Տեղական գաղութի կանայք գործի են անցել։ Խմբակը այս օրերս կուղարկվի»։

◆ Քաղաքագլուխը հեռագրով յանձնարարել է իրաւաբան Ա. Բաբեանին՝ խնդրել Պետ. Դումայի անդամ Պապաջանեանին, որ աջակցէ, որպէսզի Վարշավայի պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելու միջնորդութիւնը բաւարար լուծում ստանայ։ Թիֆլիսի մրցակից հանդիսանում է Սարատովը, որը պոլիտեխնիկումին յատկացրել է հող և միջոցներ։

◆ Պետրոգրադից հեռագրում են քաղաքագլխին, որ Վարշավայի պոլիտեխնիկումի փոխադրութեան հարցը վերջնականապէս չի վճռված տակաւին, և որ միւս քաղաքների շարքում Թիֆլիսն ունի մեծ հաւանականութիւններ. անհրաժեշտ է միայն միջնորդութիւն յարուցել Փոխարքայի միջոցով, մատնանշելով այն գումարը, որ կը տայ քաղաքը առաջին հերթին՝ փոխադրվող պոլիտեխնիկումին։ Առաջարկվում է նաև միջնորդութիւն յարուցել առևտրի և արդիւնաբերութեան մինիստրի առաջ։ Քաղաքագլուխը վերջինիս ուղարկեց հեռագիր։

◆ Իւրիևի (Դորպատի) համալսարանի վերատեսուչ պրօֆ. Պուստորօսլեվ հաղորդել է քաղաքագլխին, որ ինքը հնարաւորութիւն չունի օգտվելու Թիֆլիսի առաջարկով, որովհետև համալսարանն արդէն փոխադրվում է Նիժնի-Նովգորոդ։

◆ «Լոյս» ընկ. դպրոցի առաջին բաժանմունքում կան տասն ազատ տեղեր գաղթականների երեխաների համար։

◆ Արձակուրդներից յետոյ քաղ. դումայի առաջին նիստը գումարվելու է սեպտեմբերի 15-ին։

◆ Երևանի քաղաքագլուխը խնդրում է Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղի լիազօրին՝ շտապով դեզօրայք ուղարկել քաղաքի լազարէթի համար։

◆ Թիֆլիսի Սպառողական Ընկերութիւնների Միութիւնը դիմել է քաղ. վարչութեան, խնդրելով աջակցել, որ 20 վագոն թողնվի սպառողական խանութների համար շաքար բերելու։

◆ Ստացանք «Հայքի համար» անունով մի ժողովածու, որի հեղինակն է Ն. Մանկունի։ Գիրքը հրատարակվել է Ամերիկայում և բովանդակում է 20 պատմուածք։

◆ Ստացանք «Հառաչանք» գրքոյկ բանաստեղծութիւնների ժողովածու, աշխատասիրեց Վարդան Բամալեան, Թիֆլիս, 1915 թ., գինն է 30 կոպէկ։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Օգոստոսի 25-ից, Ալէքսանդրոպօլի Քաղաքների Միութեան փախստականների համար բացված հիւանդանոցում ամեն օր 7—15 հիւանդներ են ընդունվում։ Հիւանդների մեծագոյն մասը դիզենտերիա ունի, ապա նկատելի են մալարիա և թոքերի բորբոքում ունեցողներ։ Մնացեալների մէջ կան ռեվմատիզմ, տուբերկուլեօզ, ցրտատար, վէրքեր ունեցողներ։ Միայն մի խօլերային և մի բծաւոր տիֆով հիւանդ են բերված, որոնց անմիջապէս փոխադրած են Քաղաքների Միութեան Ալէքսանդրօպօլի լազարէթը։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Լուրերի համաձայն, Պետական Դուման գումարվելու է հոկտ. 1-ին։

◆ Աջակողմեանները միջնորդելու են կառավարութեան առաջ, որպէսզի Պետ. Դուման չը գումարվի մինչև պատերազմի վերջը։

◆ Մինիստրների խորհուրդը համաձայնել է զինւորական մինիստրի առաջարկութեան հետ, որպէսզի հրեաները չընդունվեն զինւորական դպրոցները։

◆ Բուրցևը խնդրել է Պետ. Դումայի անդամներին միջնորդել, որպէսզի նրան թոյլատրվի բնակվել Պետրոգրադում։

◆ Մոսկվայում սեպտ. 7-ին ամենօրեայ թերթերը նորից լոյս չը տեսան։ Էլեքտրաքարշն սկսեց գործել։

◆ Հոկտեմբերեանների կոմիտէտը, Գուչկովի մասնակցութեամբ, բանաձև ընդունեց, թէ ցանկալի է գումարել պալատները և որ անհրաժեշտ է մասնակցել յօգուտ զօրքի աշխատող կազմակերպութիւններին։

◆ «Սենատի Օրագրի» մէջ հրատարակված է, որ պաշտօնանկ է եղած ներքին գործերի մինիստրի օգնական, ժանդարմների առանձին կորպուսի հրամանատար գեներալ Ջունկովսկին։

◆ Հեռագրական գործակալութիւնը յայտնում է, որ Պետրոգրադում վախճանվել է կայսերական թատրոնների վաստակաւոր դերասանուհի Սավինան։

◆ Մոսկվայի լրագիրները սեպտ. 8-ին լոյս տեսան։

◆ Պետ. Հեռ. Գործակալութիւնը հաղորդում է, որ Սավինայի դագաղի վրա դրվեց սպիտակ ծաղիկներից խաչ Թագաւոր Կայսրի և Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի անունից և սպիտակ ծաղիկներից պսակ Մայր Թագուհի Մարիա Ֆէոդորովնայի անունից։

ՄԱՄՈՒԼ

ՄԱՄՈՒԼԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Русск. Вѣд.»-ն գրում է.

Այն, ինչ որ շատերին թւում էր անհաւանական, իրականութիւն դարձաւ։ Պետական Դումայի զբաղմունքները դադարեցվեցին։ Յոյսերի և ջանքերի կարճ ժամանակաշրջանից յետոյ, որպիսի յոյսերն ու ջանքերը ուղղած էին երկրի բոլոր ուժերը կազմակերպելու և միացնելու թշնամուն դիմադրելու համար, մենք նորից վերադառնում ենք այն դրութեան, որի մէջ մեզ գտան անցած ամառ պատերազմական անցքերը։ Սկսվում է նոր շրջան առանց Դումայի։

Պարլամենտական նստաշրջանի փակումը այսպիսի հանգամանքներում բացառիկ երևոյթ կը լինէր անգամ խաղաղ օրերին։ Բայց նրա նշանակութիւնը տասնապատկվում է նրանով, որ Դումայի զբաղմունքների ընդհատումը տեղի է ունենում արտաքին ծանր պայքարի ժամանակ, երբ պահանջվում է ժողովրդական բոլոր ուժերի լարումն ու միացումը։

«Утро Россіи»-ն, խօսելով Դուման արձակելու մասին, ասում է, թէ մինիստրների խորհրդի ամենանուազ փոքրամասնութիւնը յաղթանակող էր այդ հարցում։

Մինիստրների մեծամասնութեան, արձակման հակառակորդներին,—շարունակում է թերթը,—չյաջողվեց պաշտպանել իրանց կարծիքն ընդդէմ պարոնայք Գորեմըկինի, Ռուխլովի և իշխ. Շախովսկոյի։

Դումայի արձակմանը հակառակ եղող մինիստրների թւումն է եղել զինւորական մինիստր գեն. Պոլիվանով։ Եւ այս հանգամանքը վերին աստիճանի բնորոշ է գլխաւոր պատճառներից մէկը գտնելու համար, որպիսի պատճառից բխում էին արձակման կողմնակիցները, այն է՝ որ չջայնորէն տրամադրված Դումայի զբաղմունքների ընդհատումը համապատասխանում է բանակի շահերին։ Մեր բանակի շահերի նկատմամբ զինւորական մինիստրը, անկասկած աւելի կոմպետենտ է, քան առևտրի ու արդիւնաբերութեան և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրները։ Եւ հէնց զինւորական այդ մինիստրն էլ չէր պաշտպանում Դումայի արձակման գաղափարը։

«Н. Вр.»-ն նկատում է.

Ներկայ մոմենտը չէր թելադրում, որ Դուման հանգստանայ։ Րոպէի խնդիրները հրամայողաբար պահանջում էին, որպէսզի Դուման լինի իր տեղը և լարված աշխատի պատերազմի և յաղթութեան համար։

«Рѣчь»-ը ընդգծում է, որ Դուման արձակվեց շտապով, և թւում է բոլոր կիսատ մնացած գործերը։

Դուման արձակվեց իր զբաղմունքների հէնց եռուն ժամանակ, կառավարութեան մտցրած օրինագծի քննութեան միջոցին, և այն մի յանձնաժողովի ընտրութեան նախօրեակին, որի մէջ Պետ. Դուման պէտք է աշխատակից հանդիսանար կառավարութեան։ Կառավարութեան մի շարք զինւորական օրինագծեր մնացին առանց քննվելու։ Ուրիշ օրինագծեր, ոչ պակաս կարևոր, չը մտան ընդհանուր գործերի ցուցակի մէջ։ Իսկ այնպիսի կարևոր օրինագծեր, որ արդէն բաց թողեց Պետ. Դուման, ինչպիսին է եկամտային հարկի օրինագիծը, կախված մնաց օդի մէջ։

«Бирж. Вѣд.»-ն հրաւիրում է հանգիստ վերաբերվել Դումայի արձակմանը, որպիսի հանգամանքը մի անհաճոյ սիւրպրիզ կը լինէր մեր թշնամիների համար։

Բանն այժմ,—ասում է թերթը,—նրանում չէ, թէ ով է մեղաւոր, այլ նրանում, որպէսզի այդ, ում-որ և լինի, մեղքից պակաս վնասվի Ռուսաստանը։

«Колоколъ»-ը ողջունում է այն հանգստութիւնը, որով պատգամաւորները լսեցին Դումայի արձակման տեղեկութիւնը։

Երկրի և պատմութեան առաջ պատասխանատու լինելու զգացումը թելադրեց, գուցէ, առայժմ միակ հնարաւոր վերաբերմունքը դէպի ներկայ անցքերը։

«Свѣтъ»-ը, որ նոյնպէս բացասաբար է վերաբերվում Դումայի աշխատանքների ընդհատմանը, նոյնպէս հրաւիրում է «կատարեալ ինքնազսպում» ունենալ արտաքին թշնամու հանդէպ.

> Շարունակենք մեր աշխատանքը յօգուտ մեր զօրքի,—ասում է թերթը,—և յիշենք, որ թշնամին տակաւին նստած է մեր հողի վրա. և մինչև այն ժամանակ, քանի թշնամին կը մնայ մեզ մօտ, մենք չենք կարող և չը պէտք է հանգստանանք, չը պէտք է մեր ընտանեկան վէճերին առաջին տեղը տանք, չը պէտք է ուժեր և ժամանակ վատնենք այդ վէճերի վրա։

Պետական Դումայի արձակման մասին այլ դիրք են բռնում նպաստաւորվող ազգայնականների թերթերը՝ «Голосъ Руси»-ն և «Земщина»-ն։

Առաջին թերթը ողջունում է Դումայի արձակումը, իբրև քաղաքական անհրաժեշտութիւն։ Թերթը յոյս է յայտնում, որ իր կուսակցութիւնից մոլորված ոչխարները ետ կը դառնան։

Իսկ «Земщина»-ն իր յօդուածում, որ լի է անպատկառ հայհոյանքներով առաջադէմ բլօկի հասցէին, անհանգստանում է միայն մի բանի համար, թէ՝

> երկար կը նորէ՞ արդեօք Ի. Լ. Գորեմըկինի կամքի ուժը, որ նա պայքարի ոչ միայն արտաքին թշնամիների դէմ, այլ և իր աշխատակիցների շրջանում։

Եւ թերթը գտնում է, որ դրա համար երկու ելք կայ, այն է՝

> կամ Գորեմըկինին պէտք է թոյլ տրվի նորոգել մինիստրների խորհուրդը նոր մարդկանցով, առնել դիմացկուն և րօպէի լրջութիւնը ըմբռնող, կամ թէ նա ինքը պէտք է ցած դնի զէնքերը նրա

համար, որ հնարաւորութիւն չը կայ բեղմնաւոր աշխատանք կատարելու Թագաւորի և ժողովրդի համար։

Մայրաքաղաքի թերթերից մի քանիսը, ինչպէս, օրինակի համար, «День»-ը և «Петроград. Курьеръ»-ը, լոյս են տեսել սպիտակ առաջնորդողներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՂԻՒՑ

Քրիստիանիա, 27 յուլիսի

Վերջին թղթակցութեանս յայտնել էի, թէ նորվէգիական պահպանողական կուսակցութեան՝ տեղս հրատարակւող Aftenposten թերթում լոյս է տեսել մի յօդուած, որի մէջ մեզ հայերիս սաստիկ պախարակում են։ Եւ ահա թէ ինչու։

Իմ ապրած հիւրանոցի վարի՝ չորրորդ յարկում նմանապէս հիւրանոց է, «Missionshotel» անունով։ Մի քանի օր սրանից առաջ, առաւօտեան պահուն, երբ հիւրանոցից իջնում էի, վերոյիշեալ հիւրանոցի մուտքից դուրս եկան երկու՝ լաւ, կոկիկ զգեստաւորուած պարոններ, թուխ դէմքերով, սեւահեր։ Հէնց որ դէմքերը տեսայ, անմիջապէս մտածեցի, որ սրանք տաճիկներ էին, ամերիկեան ձևով հագնուած, գլուխներն էլ à l'americaine խուզած։

Ահա այս պարոնները, իրանց՝ հայ պաստորների տեղ ծախելով, «Թիւրքական և քիւրդական գազանութիւնների շնորհիւ որբ մնացած հայ մանկտիների համար որբանոց բանալու օգտին» Դանիայում, Շվէդիայում և այստեղ, Նորվէգիայում, 10,000 կրօն (կրօնը 52 կոպէկ արժէ) են հանգանակել և որպէսզի իրանց կատարած շանտաժը քողարկեն, նախապէս դիմելով վերոյիշեալ երկիրների բողոքական եկեղեցու երէցներին՝ կարողացել են նրանցից բաւական սոլիդ յանձնարարականներ փրցնել ու... գործի անցնել և «յօգուտ հայ որբերի» 10,000 կրօն հանգանակել։ Կատարելով իրանց «միսսիան», այս խաչագող պարոնները ուզեցել են, առանց դրամ վճարելու հիւրանոցի տէրոջը, ծլկել, բայց բռնվել են։ Ոստիկանութիւն, հարցաքննութիւն, խօսք-զրոյց։ Վերջապէս «պարզվում է, որ սրանք հայեր են», և որ հիւրանոցի պարտքը չը վճարելուց զատ, այլ և ուզեցել են հիւրանոցի աղախինին բռնաբարելով ... Գործը վերջանում է նրանով, որ մեր ասորի աղաներին հրամայում են ընդ փոյթ հեռանալ Նորվէգիայի սահմաններից և իրանց հետ տանել նաև ճողոպրած դրամները... սակայն տեղացիների մէջ թողնելով այն համոզումը, որ սրանք «հայեր» են։

Մեր ազնիւ բարեկամ Իւրի Կոսը կարդալով և թարգմանելով յօդուածի բովանդակութիւնը, որ կրում էր՝ «Pastorerne Nataniel og Eschjaja» (պաստորներ Նաթանիէլը և Եսայիան), «Fo armeniske svindlere, som tigger 10,000 kr.» (երկու հայ խաբեբաներ փչցրել են 10,000 կրօն) խորագիրը, հարցական հայեացք ձգեց դէմքիս. «Միթէ հայերը ընդունակ են նմանօրինակ խաչագողութեանց» այս բառերը կարդացի ես նրա հայեացքի մէջ։ Երբ ես բացատրեցի, որ յիշեալ «պաստորները» ասորի խաչագողներ են և հայութեան հետ չունեն ոչ իսկ մի նշանախեցի չափ որևէ կապ կամ առնչութիւն, նորագիւտ բարեկամս ինձ խորհուրդ տուեց որևէ կերպ պաշտպանել հայի արատաւորուած անունը։ Ես պատասխանեցի, որ նոյն այդ լրագրի միջոցով կը հերքեմ այս ամենը, յայտնելով որ նմանօրինակ դէպքեր շատ անգամ են տեղի ունեցել, երբ ասորի խաչագողները այս կարգի սխրագործութիւններ կատարելով, իրանց հայ են յայտարարել։

Սակայն, կա՛նգ առայ մի դիլեմայի առաջ։ Ի՞նչ, որ լեզուով գրեմ հերքումը։ Չէ որ նորվէգերէն չը գիտեմ։

Այս խոկումների մէջն էի, երբ Իւրի բարեկամս ինձ դուրս բերեց մասամբ դժուարին կացութիւնից։ Բանից դուրս եկաւ, որ «Aftenposten» թերթը ի շարս այլոց ունի նաև մի աշխատակից Բրօկ ազգանունով, որը Քրիստիանիայի համալսարանի լեզուաբանական ֆակուլտէտի սլաւոնական լեզուների պրոֆէսորն է, հետևաբար և հերքումս կարող եմ գրել ռուսերէն լեզուով և խնդրել խմբագրութեանը, որ ուղարկէ պրոֆէսոր Բրօկին իր ամարանոցավայրում թարգմանելու և ետ ուղարկելու պայմանով։ Հերքումը մի երկու օրից յետոյ գրեցի, տուի նոր բարեկամիս, կարդաց, ժպտաց, գոհ եղաւ։ Ծրարեցինք և փոստարկղ նետեցինք։ Բայց, ճիշդն ասած, յոյս չունէի, թէ խմբագրութիւնը կը բարեհաճի պարտ ու պատշաճ ուշադրութիւնը դարձնել յօդուածիս վրայ.

— Չէ որ պահպանողականներ են, հետևաբար և տաճկասէրներ են, — խորհում էի ես։

Բայց սխալվեցի հաշուիս մէջ։

Բանից դուրս եկաւ, որ այս երկրի պահպանողականները գիտեցել են յարգել «Audiatur et altera pars» սկզբունքը։

Հերքումս բառացի կերպով տպագրվեց յիշեալ թերթի օգոստոսի 5 թւակիր, 384-րդ համարում, առանց որևէ յապաղման։ Համարձակվում եմ կարծել, որ նա թերեւս մասամբ իւրք հետաքրքրական լինի «Մշակի» ընթերցողների համար, ուստի և առաջ եմ բերում այն ամբողջութեամբ.

⁂

Բաց նամակ «Aftenposten»-ի խմբագրութեան.

Քրիստիանիա, 28 յուլիսի.

Ա... անցնելիս, գտնվելով այստեղ, ես տեղեկացայ, որ ձեր յարգելի թերթի էջերում այս օրերս լոյս է տեսել մի յօդուած, որը վերաբերելիս է եղել ինչ-որ «Pastorerne Nataniel og Eschjaja»-ին (Պաստորներ Նաթանիէլ և Եսայիա), որոնք ձեր լրագրի կողմից ինձ անյայտ պատճառներով անտեղի կերպով հայ են եղել հռչակված։

Այսու պատիւ ունեմ, որպէս հայ և որպէս ժուռնալիստ, որոշ պարզաբանումն անել այս առիթով, որպէսզի այսպիսով վերականգնեմ ճշմարտութիւնը։ Նախ կատեգորիկ կերպով հերքում եմ այն, որ յիշեալները հայ չեն եղել, վասնզի սա ոչ առաջին և ոչ էլ հաւանօրէն վերջին դէպքն է, երբ Թիւրքահպատակ և կամ պարսկահպատակ ասորիները կամ սիրիացիները, թափառելով ամբողջ քրիստոնեայ աշխարհում, իրանց հայ են անուանում, քանզի հայերը, լինելով համարեա միակ քրիստոնեայ ժողովուրդը Մերձաւոր Արևելքում, իրանց ճնշված վիճակով և տանջանքներով Թիւրքիայի ձեռքից յանուն Քրիստոսի կրօնի, աւելի քան յայտնի են Արևմուտքում։

Եւ ահա ասորի դրամաշորթները այլ և այլ պատրուակների ներքոյ թալանելով միամիտ մարդոց, շատ յաճախ իրանց հայ են անուանում, որպէս զի դրանով աւելի հաւատ ներշնչեն այլոց։ Եղել են շատ դէպքեր, երբ այսօրինակ աֆերիստները թափառելով Ռուսաստանում, մեր գեղեցիկ և բազմատանջ հայրենիքի զանազան մութ անկիւններում իրանց անուանել են հայ վարդապետներ Երուսաղէմից, վաճառել են ռուս միամիտ մարդկանց և հաւատացեալ ծերերին փտած ծառերի այլ և այլ կտորներ, հաւատացնելով նրանց, որ այս բոլոր փտած փայտի կտորները մասն են ս. Խաչի և կամ Տիրոջ դագաղի, և այսպիսով հանգանակել են դրամներ, որպէս թէ Երուսաղէմի վանուց և սուրբ տեղերի բարեզարդութեան համար, ամեն տեղ և միշտ իրանց հայ անուանելով, որոնք համարձակօրէն կարող են նմանվել, որովհետև բոլոր ասորիները համարեա թէ խօսում են հայերէն և հարկ եղած դէպքում կարող են ապացուցել իրանց «հայկական» ծագումը, որովհետև նրանց համար դժուար չէ որևէ տեղից ձեռք բերել այս կամ այն հայի անցագիրը։ Մանաւանդ որ ասորիները կամ սիրիացիներն իրանց թուխ կաշիով նման են հայերին։

Զափազանց ցաւում եմ, որ ես առիթ չունեցայ նրանց տեսնել, և եթէ այդ ինձ աջողվէր, այն ժամանակ շատ հեշտութեամբ կարող էի բաց անել նրանց իսկական պատկերը։

A' propos, շատ զարմացայ, թէ ինչու տեղական իշխանութիւնը նրանց օրինական պատասխանատուութեան չենթարկեց խաբեբայութեան և աֆէրայի համար, երբ տեղեկացաւ գործի իսկութեան մասին։ Անշուշտ եղել են դէպքեր, երբ հայերին աջողվել է նմանօրինակ շանտաժիստներին դիմակազերծել և այդպիսով ցոյց տալ նրանց՝ հայ տարրին չը պատկանելը, բայց շատ յաճախ, ինչպէս ներկայիս, այդպիսի ձրիակերներին աջողվել է ճողոպրել արդարադատութեան ձեռքից, որով քսութեան նիւթ են դարձել հայերը։ Պէտք է աչքի անցնել երկար տարիների հայ մամուլը, որպէս զի ակնյայտ կերպով համոզվի մարդ իմ ասածներիս նկատմամբ։

Ինչ կը վերաբերի որպէս թէ հայ որբերի — որոնք, շնորհիւ թիւրք-քիւրդական բարբարոսութեանց՝ որբացել են — օգտին եղած հանգանակութեան, պիտի ասեմ, որ քիւրդ-թիւրքական գազանութեանց այս զոհերը օտարների օգնութեան կարիքը չունեն, վասն զի Կովկասի հայկական բարեգործական-կուլտուրական հաստատութիւնները, հայ ունևորների որոշ մասը, և վերջապէս ռուս կառավարութիւնը յանձին Կովկասի փոխարքայի բաւականաչափ ապահովել են Քրիստոսի կրօնի համար տանջվածների գոյութիւնը, հետևաբար և իւրաքանչիւր նմանօրինակ երևոյթ պիտի համարել ոչ այլ ինչ, եթէ ոչ սովորական շանտաժ ճարպիկ աֆերիստների։

Ընդ սմին իմ բարոյական պարտքն եմ համարում յայտարարել ի գիտութիւն ընդհանուրի, որ հայերը չունեն որևէ «պաստոր», և որ մեր՝ հայերիս հոգևորականութիւնը շատ հազուագիւտ դէպքերումն է արտասահմանում, այսինքն Արևմտեան Եւրոպայի երկիրներում, հանգանակութիւն կատարում, և եթէ իսկ լինում են այդօրինակ դէպքեր, յայնժամ հայ-լուսաւորչական եկեղեցու հոգևորականներն ունենում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտօնական հրահանգը։ Ներկայիս Կաթողիկոս Գէորգ V հանդիսանում է հայոց եկեղեցու համազգայնօրէն ընտրված պետը։

Եւ բացի այդ՝ Ռուսաստանը այնչափ հարուստ և մեծ երկիր է և նրանում ապրում են այնչափ բարի մարդիկ, որ մենք հայերս այն մեծ պետութեան մէջ կատարեալ հնարաւորութիւն ունենք հանգանակելու մեր արիւնակիցների և մեզ կրօնակից ռուս բարի ժողովրդի մէջ այնչափ դրամ, որ դրանով ոչ միայն կարելի է պահել և կրթել հայ որբերին, այլև հնարաւոր է մի մասն էլ յատկացնել ասորի որբերի օգտին, որոնք նմանապէս որոշ չափով վնասվեցին Պարսկաստանում Թիւրքական վերջին արշաւանքի ժամանակ, երբ վերոյիշեալ անմեղ զոհերի հայրերն ու եղբայրները զբաղված էին այդպիսի արհեստով՝ աֆերաներով Նորվէգիայում, Շվէդիայում, Դանիայում և այլ տեղերում ու վարկաբեկում էին հայերի բարի անունը, որոնք, սակայն, զէն ի ձեռին պաշտպանում են իրանց ժողովրդի պատիւն ու գոյքը, թիւրք-քիւրդական հորդաների բռնութիւններից և թալանից, կռւելով ռուս քաջարի բանակի շարքերում, որպիսի գործողութեանց համար, ես, որպէս հայ, պարծենում եմ համայն քաղաքակիրթ աշխարհի առաջ։

Շատ և շատ ցաւում եմ, որ քաղաքակիրթ և ազնուասիրտ նորվէգները ծանօթ չը լինելով հայերի պատմութեան և նրանց մարտիրոսագրութեան հետ յանուն քրիստոնէական կրօնի՝ բացասական կարծիք են կազմում հայերի մասին, դատելով այլ և այլ փուչ արարածների աֆերաների հիման վրա, արարածներ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն հայ բազմաչարչար ժողովրդի հետ և ծագումով էլ օտար են, որի համար, անկեղծօրէն ասած, չափազանց վիրաւորված եմ զգում ինձ, որպէս մէկը հայ ժողովրդի զաւակներից, մի ժողովուրդ, որը ահա 600 տարի է, ինչ տանջվում է բարբարոս թիւրքի ձեռքերում Քրիստոսի հաւատի և արևմտեան եւրոպական կուլտուրայի համար, որի տարածողը հանդիսանում է նա Մերձաւոր Արևելքում, արհամարհելով ամեն տեսակի հալածանք, որը հասնում է մինչև իսկ հայուհիների արգանդներից անմեղ արարածների դուրս կորզումին։ Ինձ հետ ճանապարհորդում են երկու ամերիկահայեր, ծնունդով թիւրքաց-հայաստանցիներ, որոնք նոյնիսկ երդմամբ կը վկայեն, որ նման աֆէրիստ-ասորիները բազմիցս ենթարկվել են այլևայլ պատիժների Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Պետութիւնների մէջ զանազան շանտաժների համար, որպիսի խարդախութիւններ թոյլ են տուել իրանց սիրիացիները կամ ասորիները իրանց անուանելով հայեր։

Հաւատացած եմ, որ իմ այս բացայայտումը տեղ կը գտնէ ձեր յարգելի թերթի էջերում յանուն «Audiatur et altera pars» սկզբունքի, որի համար կանխօրէն յայտնում եմ ձեզ, մեծապատիւ պարոն խմբագրապետ, իմ սրտագին շնորհակալութիւնը։

⁂

Չեմ կարող ասել, թէ որ աստիճան կարողացայ պաշտպանել հայերին նորվէգների առաջ և որչափով տպաւորութիւն գործեցի իմ հերքումով և կամ ցրեցի հայերի նկատմամբ եղած թիւր ըմբռնումը այս երկրում. բայց ինձ թւում է, թէ, ով և լինէր այն հայը, որը պատահաբար գտնվէր այս պետութեան մէջ, եթէ երբէք քիչ շատ գրիչ շարժելու ընդունակութիւն ունենար, պէտք է որ իր սուրբ պարտականութիւնը համարէր գէթ մի քանի խօսքերով վերացնել հայի վրայից միանգամայն անտեղի կերպով բարդված մեղադրանքները։ Այսպիսով ես գէթ որոշ գաղափար կարողացայ ներշնչել նորվէգներին հայերի նկատմամբ. մի խօսքով՝ արի այն, ինչ որ կարող էի անել իմ ույժերիս և պատրաստութեանս ներածին չափ։

Ցար. Գասպարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՆՈՒՑՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ, Մուշի Ալիզլբուն գիւղացի Կարապետ Ասաբեանին.— Ձեր անունով նամակ կայ ստացված մեր խմբագրատանը։

ԹԻՖԼԻՍ, Ամերիկահայ կամաւոր Պօղոս Մինասեանին.— Կարդացէք վերևինը։

Թիֆլիս, Բենիամին Բարսեղեանին.— Թախտաբազարից՝ Տիգրան Բազումովից նամակ է ստացված ձեզ յանձնելու համար։ Մտէք խմբագրատուն և ստացէք։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան. Սեմեօնովսկայա, № 16.
(Հ. ու. կ.) 1018. 100—80

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Պուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ՝
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. Ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳՈՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—149

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐՈՒՃԻ վանական դպրոցի համար հարկաւոր է մի գիմնազիաւարտ՝ ռուսաց լեզուի Վարժուհի կամ սեմինարիաւարտ Ուսուցիչ։ Դասերի թիւն է 24. դասագինը 20 ռուբլի։ Տրվում է նաև բնակարան։ Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Александрополь, Попечительству Кипчахского Монастыря.
(օ. մ.) 632. 3—1

ՄԻ ՖՐԱՆՍՈՒՀԻ
ՏԱԼԻՍ Է ԴԱՍԵՐ
ֆրանսերէն լեզուի և երաժշտութեան (դաշնամուր)։ Հասցէն՝ Կրիլովսկայա փող. № 5,
633. տուն Կուկլեւովի։ 2—1

ԴԱՍԱԳԻՐՔ
Հայրենագիտութեան
Ե. ԹԱՒԱՐԲԵԳԵԱՆԻ
Գինն է առանց կազմի 50 կոպ.։ Դպրոցներին 20% զեղչ։
Դիմել հեղինակին՝ Кадетская ул. № 2, д. Тамамшева, Е. Таварбегянъ.
(կ.) 630. 2—1

ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԳԻՒՏ
Վերադարձնում է ույժերը, կայտառութիւնը և տղամարդութիւնը։
Տարիներ շարունակ, ասում է պրոֆ. Ժակ Լերու-Սինօ, կրում էի հոգեկան տանջանքներ. ես ամաչում էի ուղիղ նայել մարդկանց երեսին, թոյլ, հիւծված, կենսական ույժերս ու սեռական եռանդը վերադարձնելու յոյսս կորած, ես չէի կարողանում առողջ տղամարդու վայել դիրք պահել հասարակութեան մէջ ես սկսեցի ճանապարհորդել մի երկրից միւսը, խորհրդակցել յայտնի բժիշկների հետ և փորձել ամեն տեսակ բժշկական միջոցներ, բայց վերջ ի վերջոյ զգացի, որ քայքայվում եմ հոգեպէս, ֆիզիքապէս ու բարոյապէս և սարսափում էի անձնասպանութեան կամ գժանոցի մտքից։ Բարեբախտաբար ինձ աջողվեց գնալ Պարիզ, ուր իմ մի բարեկամը բժշկվում էր ջղայնութիւնից. նա խորհուրդ տուեց ընդունել ֆօսֆոր, այսինքն դոկտ. Կլէզի ՍԵՐՄՈՒԼՕԼԸ։ Ես չը հաւատացի, բայց որովհետև նա ընդունել էր և դրանով կրկին վերադարձրել իր առողջութիւնը, ուստի ես էլ որոշեցի փորձել. նա վերադարձրեց իմ նախկին կայտառութիւնը և ջղային ույժը. Ներմուծեց արեանս մէջ նոր կեանք և իմ մարմնի բոլոր օրգաններին տուեց եռանդ և երիտասարդական ույժ։ Մեծ էր իմ ուրախութիւնը, երբ անօգուտ կերպով շատ հռչակված դեղեր ընդունելուց յետոյ, պատահաբար ծանօթացայ այդ միջոցի հետ և բժշկվեցի։ Այդ բոլորը ինձ աջողվեց ամենահասարակ սիստեմի միջոցով, որը ամեն մէկը կարող է գործածել աննկատելի կերպով։ Իմ ուրախութիւնը մեծ է, և ես որոշեցի իմ բաղդաւորութեան գաղտնիքը հաղորդել նոյն ցաւով տառապողներին. դա դոկտ. Կլէզի ֆօսֆօրն է, այսինքն Սերմուլօլը, որը թոյլ, ջղային, ընկճված ու սեռական եռանդը կորցրած հազարաւոր մարդկանց կամքի։ Ներկայումս այդ դեղով ես բժշկվում եմ և լաւ հետևանքների հասնում։
Կլինիկա ջղային և ներքին հիւանդութիւնների՝ դոկտ. Ժակ Լերու-Սինօ։
Իսկական Սերմուլօլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի տուփը ունի գործարանի դրոշմը. „Institut D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք ձեր հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզած եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր եւրոպական և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների գովասանքները և շնորհակալական նամակները։
Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Институтъ Д-ра Кальве, Тифлисъ, Эриванская площ., Пушкинская 3, отд. 11|2, верхній этажъ, д. Кредитнаго О-ва (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկէ 7 ր. փողը առաջուց լրիվին, ճանապարհածախս չի վճարում։ (ու.) 609. 10—2

ՅՈՎՀ. ՄԱԼԽԱՍԵԱՆ և ՆԱՐ-ԴՕՍ
„ԳԻՐ ԵՒ ԿԵԱՆՔ"
Հայոց լեզուի դասագիրք դպրոցների առաջին, ծխական դպրոցների բարձր դասարանների և պետական դպրոցների համար։
Գինն է 1 ր. 25 կ.
Գումարով առնողներին 20% զեղչ։
Դիմել՝ Թիֆլիսի հայ գրավաճառներին։
614. 3—3

ԿՈՎ ԿԹՈՂ ԿԱՆԱՅՔ
Հարկաւոր են քաղաքից դուրս։ Ցանկալի կը լինէր թիւրքահայերից։ Դիմել Вельяминовская ул. № 8, կաթի պահեստ։
(օ. մ.) 631. 3—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՀԻՄՆ. Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
(Երկու սեռի համար)
Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ., № 24.
Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 10—12 ժ. առ., ժ. 5—7 երեկ.։
Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 21-ից։
Տեղեկութիւններ տրվում և ուղարկվում են ձրի։
(հ. ու. շ.) 589. 0—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՒ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ
Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից։ Պարապմունքների սկիզբը՝ ուսումնարանում—սեպտեմբերի 1-ից, կուրսերում—սեպտ. 15-ից՝ I Тумановская ул. с. д. № 13.
534. 10—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
(Գոյութիւն ունի 1895 թւից)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
Դասընթացքը 4-ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։
Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատանը—Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փողոց, № 23. Տէլ. № 7—44.
(ե. ու. կ.) 487. 0—17

ԱՐՇԱԿ ՋԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏԻՔ ԽՍԱՀԱԿԵԱՆԻ
կազմած
ԴԱՍԸՆԿԵՐ

Առաջին տարի այբբենարան-ընթերցարան	վեցերորդ տիպ	40 կ.
Երկրորդ տարի	վեցերորդ տիպ անփոփոխ	50 կ.
Երրորդ տարի	հինգերորդ տիպ անփոփոխ	60 կ.
Չորրորդ տարի		70 կ.

Այբբենարանն ամբողջովին ձեռագիր. բոլոր տարիներում կան արտագրութեան համար ձեռագիր օրինակներ և զրուցատրական, շարադրական ու պարզ գծերով նկարչական պատկերներ։
Դասընկերն Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից թոյլատրված է որպէս դասագիրք։
Ցանկացողները դիմեն Թիֆլիս—«Գիր» գրավաճառանոցին, Երևան՝ «Արարատ» և Յովհաննիսեան գրախանութներին, կազմողներին Երևան՝ թեմական դպրոց։
Գումարով առնողներին կը լինի զեղչ։ (ու. շ.) 578. 8—5

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.